# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 63-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով և հիմք ընդունելով սեփականատեր Ռիմա Արշակյանի 2020 թվականի օգոստոսի 31-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչ՝ Ռիմա Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական 2450381, տրված 2008 թվականի նոյեմբերի 21-ին, կադաստրային ծածկագիր 07-033-0096-0013) Լեռնանիստ համայնքում գտնվող անշարժ գույքին տրամադրել հասցե՝

Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 1-ին փողոց թիվ 64/1:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 1
գ.Լեռնանիստ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 64-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Թույլատրել Լեռնանիստի համայնքապետարանին՝ իրականացնելու Լեռնանիստ համայնքի 4-րդ, 7-րդ, 9-րդ թաղամասերի ճանապարհների ասֆալտապատման /հիմնանորոգման և բարեկարգման/ աշխատանքները, համաձայն «ԿՈՏ-ՀԲՄԱՇՁԲ-20/4Հ-1» գնման պայմանագրի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 3
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55 33 04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 65-Ա

ՎՈԼՈԴՅԱ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ,ԱՂԱՎՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎՈԼՈԴՅԱ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ, ԱՂԱՎՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վոլոդյա Մովսեսի Մովսիսյանի /ծնված 1949 թվականի հուլիսի 1-ին/, Աղավնիկ Սերյոժայի Մովսիսյանի /ծնված 1957 թվականի հունվարի 17-ին/ և Արմեն Վոլոդյայի Մովսիսյանի /ծնված 1973 թվականի ապրիլի 18-ին/ դիմումը և ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վոլոդյա Մովսիսյանին, Աղավնիկ Մովսիսյանին և Արմեն Մովսիսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասերը նախատեսված չեն այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չեն ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմաներին, չեն

սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Վոլոդյա Մովսեսի Մովսիսյանի, Աղավնիկ Սերյոժայի Մովսիսյանի և Արմեն Վոլոդյայի Մովսիսյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0108-0003 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,292815 հա մակերեսով և կադաստրային 07-033-0108-0006 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,026277 հա, մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Վերականգնել Լեռնանիստ համայնքի 2-րդ փողոց թիվ 26 հասցեում գտնվող 0,292815 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15 ը կառուցված 98,59 քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության անավարտ շինության նկատմամբ Վոլոդյա, Աղավնիկ, Արմեն Մովսիսյանների սեփականության իրավունքը:

3. Հողամասի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Քաղաքացիներ՝ Վոլոդյա, Աղավնիկ, Արմեն Մովսիսյաններին պատկանող կադաստրային 07-033-0108-0003 ծածկագրով 0,292815 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 26, իսկ կադաստրային 07-033-0108-0006 ծածկագրով 0,026277 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2 րդ փողոց 26/1:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ՝ Վոլոդյա, Աղավնիկ, Արմեն Մովսիսյանների սեփականության իրավունքը ամրագրված հողամասերի և շինության նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 7

գ.Լեռնանիստ